Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1917 թվականի փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում զարթոնք է ապրում ազգային կյանքը: Մասնավորապես սկսվում է դպրոցների ազգայնացման գործընթացը, որն իր բարերար ազդեցությամբ հանդերձ ծանր դրության մեջ է գցում Անդրկովկասի հայկական դպրոցներին: Ցարական Ռուսաստանի կողմից ազգային մշակույթի ամեն մի դրսևորման դեմ կատաղի պայքարի և ռուսիֆիկացման քաղաքականության հետևանքով Անդրկովկասի հայաբնակ շրջանների բնակչությունը զրկված էր հայերեն կրթություն ստանալու հնարավորությունից:

Դպրոցների ազգայնացման նպատակով 1917 թվականի դեկտեմբերից Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը ձեռնամուխ է լինում հայագիտական դասընթացներ կազմակերպելուն: Դասընթացների ղեկավար Ե. Տեր-Մինասյանին հանձնարարվում է մանկավարժական դասընթացները վերածել հայագիտականի և կարճ ժամանակում պետական դպրոցներն ավարտած ուսուցիչներին վերապատրաստել ազգային դպրոցներում աշխատելու համար: Դասընթացները տևելու էին վեց ամիս և կրելու էին պարտադիր բնույթ:[1]

Դասընթացների հեղինակությունը բարձրացնելու համար դասախոսական աշխատանքի են հրավիրվում քաղաքում հայտնի մասնագետները: Դասընթացների ղեկավար Ե. Տեր-Մինասյանը քաղաքային վարչությանն ուղղված իր զեկուցման մեջ այս մասին գրում է. «Որովհետև վարչութեանդ անդամ պ. Վ. Նաւասարդեանը խնդրեց ինձ հոգալ նաև այնպիսի դասախօսներ գտնելու մասին, որոնց հեղինակութեան ու կարողութեան վերաբերմամբ ոչ մի կասկած ու խօտակցութիւն լինել չի կարող, և նրանց ընտրութեամբ ցոյց տալ նաև, թէ ով պէտք է լինի այդ դասընթացների ղեկավարը, ես յարմարագոյն համարեցի բանակցութեան մէջ մտնել Արղութեան միջնակարգ դպրոցի վերատեսուչ ճեմարանաւոր և Ստրասբուրգի համալսարանի արևելագիտական պատմական բաժինը փիլիսոփայական դոկտորի տիտղոսով աւարտած պ. Մկրտիչ Ղազարեանին, որը յանձն առաւ Հայաստանի աշխարհագրութեան և Հայոց պատմութեան դասերը և նոյն դպրոցի բարձր դասարանների ուսուցիչ ճեմարանաւոր և իւր բազմամեայ փորձառութեամբ ու բանասիրական ուսումնասիրութիւններով յայտնի պ. Գրիգոր-Պօղոսեանին, որը համաձայնեց դասաւանդել Հայոց լեզու: Տողերիս գրողին մնացին Հայոց գրականութեան դասերը և վերև յիշուած ընկերների ցանկութեամբ նաև դասընթացների ընդհանուր ղեկաւարութիւնը»:[2]

1918 թվականի մայիսին հռչակված նորաստեղծ հայկական պետությունը, դպրոցների ազգայնացմանը զուգընթաց, ձեռնամուխ է լինում պետական հիմնարկությունների հայացմանը: Նոր ստեղծված պետության պաշտոնյաները լավ չէին տիրապետում հայերենին, շատ հիմնարկություններում կարևոր պաշտոնները գտնվում էին օտարազգիների ձեռքին, ինչպես օրինակ՝ դատարանը, զինվորական նախարարությունը և այլն: 1919թ. նոյեմբերի 28-ին, ելնելով այս հանգամանքից, Հայաստանի խորհրդարանը հաստատում է պաշտոնյաների համար հայոց լեզվի դասընթացներ

---

[1] *ՀԱԱ, ֆ.105, գ.1, գ.2724, թ.1:*
[2] *Նույն տեղում, թ.4:*

կազմակերպելու մասին օրինագիծը:[3] 1919թ. դեկտեմբերի 24-ի նիստում Հայաստանի խորհրդարանը Լևոն Շանթի նախագահությամբ քննարկում է այդ օրինագիծը: Օրենսդրական հանձնաժողովը, ընդունելի համարելով օրինագծի սկզբունքները, այնուամենայնիվ իրականացնում է մի շարք փոփոխություններ: Մասնավորապես հանվում է հայերենի պետականացման օրենքը չգործադրող պաշտոնյաներին գործից հեռացնելու մասին առաջարկը: Ի վերջո, մշակվում է երեք հոդվածից բաղկացած մի նոր օրինագիծ, որի համաձայն՝ հայերենը հռչակվում էր պետական լեզու՝ պարտադիր զորքի և պետական հասարակական հաստատությունների մեջ: Այդ նպատակով գործնական քայլեր անելու և հայերենը պետական գործավարության լեզու դարձնելու համար տրվում էր երեք ամիս ժամանակամիջոց: Այլ լեզուների գործածությունը պետական ու հասարակական հաստատություններում սահմանվելու էր հատուկ օրենքով, իսկ մինչ այդ, այլազգի քաղաքացիները իրավունք էին ստանում դիմումներ գրելու իրենց մայրենի լեզվով: [4]

Հարկ է նշել, որ հայերենը պետական լեզու հռչակելու հարցում խորհրդարանի անդամները միակարծիք չէին: Ոմանք կարծում էին, թե օրինագծի հեղինակները շտապել են, որ այդ հարցը միանգամից լուծել անհնարին է, քանի որ կարևոր պաշտոններ զբաղեցնող անձինք կան, ովքեր հայերեն չգիտեն, և նրանցից հրաժարվելը ճիշտ չէ: Իսկ մյուսները գտնում էին, որ այդ խնդրի լուծումը նույնիսկ ուշացրել են, անկախության հռչակման օրն արդեն պետք է այն ընդունված լիներ: Քննարկումներից հետո, ի վերջո, ընդունվում են օրինագծի 1-ին և 2-րդ հոդվածները, որով էլ Հայաստանի Հանրապետության պետական լեզու է հռչակվում հայերենը և դառնում է պարտադիր զորքի, պետական ու հասարակական հաստատությունների մեջ: Պետական ու հասարակական հիմնարկությունները պարտավոր էին վեց ամսվա ընթացքում գործնական միջոցներ ձեռք առնել հայերենը պետական գործավարության պաշտոնական լեզու դարձնելու համար: Այլ լեզուների գործածությունը պետական ու հասարակական հաստատությունների մեջ սահմանվելու էր հատուկ օրենքով: [5]

1920 թվականի հունվարից, հիմնվելով վերոհիշյալ օրենքի վրա, Երևանում և Ալեքսանդրապոլում բացվում են հայագիտական դասընթացներ՝ հայերեն չիմացող հայ և օտար պաշտոնյաների համար: Մասնավորապես, հունվարի 10-ին Հանրային կրթության և արվեստի մինիստրը իր շրջաբերական գրությամբ առաջարկում է Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչին կազմակերպել Ալեքսանդրապոլում հայագիտական դասընթացներ:[6] Ընդ որում մինիստրությունները իրենք էին կազմելու այն պաշտոնյաների ցուցակը, որոնք մասնակցելու էին հայագիտական դասընթացներին: Դասընթացների կազմակերպումը հանձնարարվում է Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցի տեսուչ Լևոն Սարգսյանին:[7] Վերջինիս ուղղված նույն օրվա գրությամբ մինիստրը նշում էր, որ դասավանդումը լինելու է խիստ գործնական, որ այս դասընթացների նպատակն է պաշտոնյաներին սովորեցնել գրել պարզ և ընթեռնելի: Պարապմունքները նախատեսվում էին շաբաթական վեց ժամ, առնվազն չորս օր: Հանրային կրթության և արվեստի մինիստրը միաժամանակ նշում էր, որ իրենք տալիս են սկզբունքը, բայց ոչ մեթոդական ցուցումներ: «Դասատուներն ազատ են առաջադրած նպատակին հասնելու համար, -ասված էր գրության մեջ:- Մեր նպատակն է

---

[3] *Հայաստանի Հանրապետության Պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., գլխ. խմբագիր և կազմող Ա. Վիրաբյան, Եր., 2010, թ. 403:*

[4] *Նույն տեղում, թ. 403:*

[5] *Նույն տեղում, թ. 407:*

[6] *ՀԱԱ, ֆ. 307, ց.1, գ.124, թ. 57:*

[7] *Նույն տեղում, թ. 58:*

կարելոյն շուտ ունենալ պաշտօնեաներ, որ ընթեռնելի ձեռագրով պաշտոնական թղթեր կազմել կարողանան և նման գրութիւններ հասկանան»:[8]

Դասընթացները բացվում են փետրվարի մեկից և ընթանում բավականին անկանոն: Հայագիտական դասընթացների նախագահի՝ հանրային կրթության և արվեստի մինիստրին ուղղված ապրիլի 24-ի գրության մեջ նշվում էր, որ չնայած պետական հիմնարկներից ներկայացվել է 73 դիմում, սակայն դասընթացին հաճախում է ընդամենը 48 պաշտոնյա: Այդ դիմումների հիման վրա թեև բացվել են երեք խմբեր, բայց դրանցից միայն առաջին խումբն է հաճախել կանոնավոր, որն էլ ի դեպ բաղկացած է եղել օտարազգիներից: Ինչ վերաբերում է զինվորական իշխանություններին, ապա սրանք թեև ուղարկել էին դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնած 38 հոգու ցուցակ, և ի պատասխան այդ ցանկության հանձնաժողովն առանձին օր էր նշանակել նրանց ընդունելու համար, սակայն նրանք ընդհանրապես չեն ներկայացել: Հանձնաժողովը, նման պարագայում աննպատակահարմար գտնելով շարունակել դասընթացները, առաջարկում է դադարեցնել երկրորդ և երրորդ խմբերի պարապմունքները:[9] 1920թ. ապրիլի 28-ին Հանրային կրթության և արվեստի մինիստրի պաշտոնակատարի՝ հայագիտական դասընթացները կարգավորելու վերաբերյալ մինիստրություններին ուղղված գրությամբ խնդրվում էր նախազգուշացնել այդ մինիստրությունների պաշտոնյաներին, որ այդպիսի անտարբեր վերաբերմունքը կստիպի փակել դասընթացները, իսկ իրենք հետագայում խնդիրներ կունենան որակյալ հայերեն իմանալու համար:[10] Նույն օրն էլ Հանրային կրթության և արվեստի մինիստրի օգնականը տեղեկացնելով Ալեքսանդրապոլի պաշտոնյաների դասընթացների ղեկավար Լ. Սարգսյանին, որ նախազգուշացրել է մինիստրություններին ստեղծված վիճակի մասին, առաջարկում է շարունակել պարապմունքները, հետագայում միայն դրությունը չփոփոխվելու դեպքում հնարավոր համարելով փակել խմբերը: «Մինիստրութիւնս, նշված էր գրության մեջ,- վաղաժամ է համարում Ձեր դասընթացներին անկանոն կերպով յաճախող գրագիրների պարապմունքների դադարեցումը: Մենք դիմել ենք մինիստրութիւններին խնդրելով նախազգուշացնել իրենց պաշտօնեաներին, որ այդպիսի անտարբեր վերաբերմունքը կհետեւեցնէ պարապմունքների դադարեցումը, որը (հանգամանքը) չէ կարող չանդրադառնալ հայերեն սակաւ իմացող պաշտօնեութեան յետագայ դրութեան վրայ»: [11]

1920թ. մայիսյան դեպքերին զորքի մասնակցությունը, սպայական կազմի անցնելը բոլշևիկների կողմը, բարձր հրամանատարական կազմի վերաբերմունքը, պետական պաշտոնյաների կեցվածքը ստիպում են կառավարությանը դիմել ավելի կտրուկ միջոցների:

Մայիսյան դեպքերի պատճառները քննելու և հետևանքները վերացնելու գործողությունները մշակելու նպատակով կազմվում է հատուկ քննիչ հանձնաժողով:[12] Քննելով մայիսյան դեպքերի հնարավոր պատճառները՝ կառավարությունը միջոցներ է ձեռք առնում դրանք վերացնելու ուղղությամբ: Ի թիվս մի շարք այլ միջոցառումների՝ կառավարությունը ձեռնամուխ է լինում պետական հիմնարկությունների հայացմանն ու ազգայնացմանը: 1920թ. մայիսի 30-ին հաստատվում է «Պետական լեզուն չիմացող պաշտոնյաների լիկվիդացիայի մասին» օրենքը, որի համաձայն հայերեն չիմացող

---

[8] *ՀԱԱ, ֆ. 307, ց.1, գ.124, թ. 57:*
[9] *Նույն տեղում, թ. 75:*
[10] *Նույն տեղում, թ. 76:*
[11] *Նույն տեղում, թ. 75:*
[12] *ՀՀ Պառլամենտի օրենքները, Եր., 1998, էջ 328-29: ՀԱԱ, ֆ.199, ց. 1, գ.153, թ. 51:*

պաշտոնյաները հեռացվում են աշխատանքից:[13] Այս օրենքը միանշանակ չի ընդունվում ոչ միայն հայ հասարակության, այլ նաև Ամերիկյան կոմիտեի հիմնարկությունների կողմից, որտեղ աշխատում էին մեծ թվով ռուս պաշտոնյաներ: Բայց կառավարությունը չի գնում ոչ մի զիջման: «Հայաստանի կառավարությեան կարգադրությեամբ Հայաստանի սահմաններից հեռացուում են վերջերս Ամերիկեան կոմիտէի հիմնարկութիւններում նոր ընդունուած ռուս պաշտօնեաները, որպէս պետութեան համար վնասակար, մեր կառավարութեանը դավաճանած խռովարար տարրեր, - գրում է «Շիրակի աշխատավորը»,- Այս երևոյթը վրդովեցրել է Ամերիկեան կոմիտէի տեղիս ներկայացուցիչ կապիտան Էքմանին, որը փակել է Ալէքսանդրապօլի արհեստանոցները, դուրս շպրտելով 400 բանվորների, սովի և թշառութեան մատնելով 2500 տեղացի և գաղթական ազգաբնակչութեանը: Նման վերաբերմունքը անսպասելի էր և միանգամայն վրդովեցուցիչ: Այս քայլով Էքմանը ուզում էր հակազդել կառավարութեան քաղաքականութեանը, բայց որքան էլ ծանր լիներ 400 աշխատավորների գործազուրկ դրութիւնը, նոյնքան էլ անհանդուրժելի էր, որ նման դէպքերում պետութիւնը զիջեր, փոխեր իր որոշումները հայրենիքի դավաճանների նկատմամբ»:[14]

Սակայն բանակի հարցում կառավարությունը, այնուամենայնիվ, ստիպված է լինում գնալ որոշ զիջումների: 1920թ. հունիսի 26-ին ՀՀ ռազմական մինիստր Ռուբեն Տեր-Մինասյանը հրամայում է իրականացնել բանակի բոլոր մասերի, վարչությունների հաստատությունների ազգայնացումը: Առաջին հերթին ազգայնացվելու էին շտաբները, վարչությունները, դրանցում գրագրությունը մինչև օգոստոսի 1-ը իրականացվելու էր հայերենով: Հայերենին չտիրապետող սպաները, կամավոր ծառայողները հեռացվում էին պաշտոններից, բացառությամբ նրանց, ովքեր իրենց մասնագիտությամբ ճանաչվում են անփոխարինելի, որոնց փոխելը առանց գործին վնաս տալու հնարավոր չէր: Ազգությամբ հայ սպաներին ևս թողնում էին ծառայության հայերենը սովորելու պայմանով:[15] Բյուրո կառավարությունը մայիսյան խռովությունը ճնշելուց հետո գտնում է, որ վիճակը կարելի է փոխել դաշնակցականներին հայոց բանակի շարքերը մոբիլիզացնելով:[16] Դաշնակցության մարտական ուժերը կանոնավոր բանակի ստեղծման պայմաններում դուրս էին գտնվում բանակի ղեկավարման գործից: «Դաշնակցութեան հաստատուած մարտական սերունդը,- գրում է Կ. Սասունին,- խումբի, խմբապետի, մառզերիստի անուամբ գրեթէ դուրս կը մնար հայկական բանակէն և մեր կուսակցութեան մարտական տարրերը, որպէս զինական ուժ կը մնային երկրորդական, երրորդական գծի վրայ: Մինչդէռ մեր կուսակցութեան ղեկավար մտավորականութիւնը կը շարունակեր մնալ առաջին գծի վրայ, ազգային վերածնունդը կերտելու համար: Դաշնակցութիւնը միտքն ու կամքն էր, ոգին՝ ամբողջ ազգին, իսկ բանակը շարժող ձեռք մը՝ առանց սակայն ոգիի: Օրգանական կապ չկար այս երկու խոշոր ուժերու մէջ, որոնք պէտք է ի մի ձուլուած լինէին:

... Հայկական քաղաքական միտքը եւ զինուորական դասը անջատ էութիւններ էին, և այդ երկուութիւնը պատճառ դարձաւ, որ հայկական ամբողջ այժը մնաց անկազմակերպ, իսկ կազմակերպուածը՝ մնա թոյլ և չդիմանա վճռական հարուածի»:[17]

Հայաստանի վարչապետ Համո Օհանջանյանը, մայիսյան դեպքերի մասին իր հաղորդագրության մեջ, բանակի վրա մայիսյան ապստամբության ունեցած բացասա-

---

[13] *ՀՀ Պառլամենտի օրենքները, էջ 341:*

[14] *«Շիրակի աշխատավոր», Ալեքսանդրապոլ, 1920, թիվ 25:*

[15] *Ռուբեն Տեր-Մինասյան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գլխ. խմբագիր և կազմող Ա. Վիրաբյան, Եր., 2011, էջ, 115-116:*

[16] *ՀԱԱ, ֆ. 4047, ց.1, գ.179, թ. 2:*

[17] *«Հայրենիք», Բոստոն, 1926, թիվ 4:*

կան դերի մասին ասում է. «...բացասական հետևանքներից մեկն էլ կարող էր լինել բանակի քայքայումը, որը միանգամայն ձեռնտու էր մեզ օղակող թշնամիներին: Սակայն ուրախ եմ, որ դա տեղի չունեցավ, այլևս առաջինից ավելի զգաստ, ավելի արթուն զորքը պատրաստ է դիմադրելու թե ներքին խռովութեանց, և թե արտաքին հարձակումներին»:[18] Սակայն հետագա դեպքերը հակառակն ապացուցեցին: Հայոց բանակի մեջ առկա օտար ոգին և ազգային իդեալների ճշգրիտ պատկերացումների բացակայությունը նպաստավոր պայմաններ ստեղծեցին բոլշևիկյան պրոպագանդայի համար՝ դառնալով հայկական բանակի բարոյալքման պատճառներից մեկը:

К ВОПРОСУ О ЯЗЫКОВОЙ ПОЛИТИКЕ В ПЕРВОЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

___ *К. Алексанян* ___

___ *Резюме* ___

В статье представлены мероприятия по национализации государственных учреждений и армии Первой республики Армении и их результаты. В становлении Первой республики Армении велика была роль армянского языка. Как показало исследование, имеющие место в среде военнослужащих армянской армии чуждый дух и отсутствие национальных идеалов сыграли благоприятную роль для большевистской пропаганды и стали одной из причин деморализации армянской армии.

---

[18] *«Ժողովուրդ», Եր., 1920, թ.92:*